# Ռուլիկ

արվեստի հանդես | # 1(7), 2023

# ԷԴՈՒԱՐԴ ԻՍԱԲԵԿՅԱՆԻ ԳՐԱՖԻԿԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ

Օվսաննա Քարամյան
արվեստաբան

Մտապատրանքի փոթորկում, տեսիլքներ, իրականի և անիրականի միախառնում, երազների մեջ երկխոսություն... Պատգամ, պատմության դրոշմներ ու խորաթափանց միտք... Պատկեր պատկերի ներսում կամ թվացյալ տարածություն սահմաններից դուրս, անվերջ հասունացող նոր տեսարաններ... Գիծ, գույն, աներանգ տարածություն, բայց և անչափ գունեղ... Հույզեր, կիրք, սպասում, շշուկի աղմուկ լռության մեջ և զգացմունքների համատարած պոռթկում:

Էդուարդ Իսաբեկյանի կերպարները ճանաչում ես հազարների միջից, առանձնացնում և անհատական վերաբերմունք ձևավորում. յուրաքանչյուր պատկեր ունի իր պատմությունն ու կուլմինացիան: Նրա գծանկարները առանձնանում են իրենց ռոմանտիկ հուզականությամբ, որտեղ հստակ երևում է արվեստագետի հախուռն բնավորությունը, սերը կյանքի նկատմամբ՝ բնության և շրջապատող աշխարհի անհորիզոն ընկալումներով: Նրա գծանկարչական ռիթմերն այնքան խոսուն են, այնքան իրական, որ այն, ինչ չես տեսնի աչքերով, նա ներկայացնում է շատ ավելի հուզական լեզվով և իր գծով արտահայտում է մարդկային հավերժական արժեքներն ու ապրումները: Նկարիչը լավ ծանոթ է կյանքի դառնություններին տարաձև շերտերին և մարդկային բնավորության խորություններին. ետ մղելով նյութական արժեքները՝ արվեստի միջոցով նա բացահայտում է ոգեղենի կարևորությունը: Եվ դա է պատճառը, որ նրա կերպարները համամարդկային են, ազատ ու անկաշկանդ և ունեն յուրատեսակ խորհրդավորություն ու երազանքներ: Իսաբեկյանի աշխարհը իր հոգու արձագանքն է, որտեղ ապրում են և՛ պատմական, և՛ իրական անհատներ: Նկարիչը ճանաչում է իր զգացածի կարևորությունը և մեծ վարպետությամբ դիտողին է փոխանցում իր «մոնոլոգը»:

Էդուարդ Իսաբեկյանի ստեղծագործությունները իսկապես մեկուսի աշխարհներ են՝ և՛ կազմությամբ, և՛ պատկերաոճով, և՛ գունային սիմֆոնիայով: Նրա գրաֆիկայի թեմատիկան բազմաբովանդակ է. հայ-

Իրիկնամուտին. 1994, թուղթ,
խառը տեխնիկա, 40×56, ընտանիքի հավաքածու

Ինքնադիմանկար. 1974, թուղթ, ածուխ,
սանգինա, 59×41, ընտանիքի հավաքածու

Ալիսան գժվեց. 1994, թուղթ, պաստել,
57×40, ընտանիքի հավաքածու

ռենի պատմության էջեր, դիցաբանություն, գրական գեղարվեստական երկերի նկարազարդումներ, դիմանկարներ... երազներ, կանայք, զգացմունքների հարատև գունապնակ, բնության տարերքներ: Նկարիչը աշխատել է գրաֆիկական գրեթե բոլոր նյութերով՝ մատիտ, թանաք, սանգինա, կավճամատիտ, ֆլոմաստեր, ածուխ՝ ամենուրեք թողնելով գծի, ռիթմի և ձևի ուրույն ձեռագիր:

Իր կյանքի վերջին տարիներին, երբ կորցրել է տեսողությունը, նկարիչը չի դադարել ստեղծագործել և նկարել է մինչև իր կյանքի մայրամուտը: 2022 թ. նոյեմբերի 4–ին բացվեց արվեստագետի գրաֆիկական աշխատանքների ցուցահանդեսն Էդուարդ Իսաբեկյան ցուցասրահում:

Էդուարդ Իսաբեկյանը 20–րդ դարի հայ արվեստի պատմության անքակտելի մասն է, մի ամբողջ դարաշրջանի լուռ վկայությունը, երբեք չընդհատվող գիծը: